.

<< ԻՆՏԵՐԿԱՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՊԱՏՄԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Հեղինակ – Ռուզան Վարդանյան

Ղեկավար – Գագիկ Էմինյան

Ալավերդի 2022

Բովանդակություն

Ներածություն---------- 3

ԳԼՈՒԽ 1. Պատմելու կարողության գործընթացը կրտսեր դպրոցում---------- 4

ԳԼՈՒԽ 2. Սովորողների խոսքի ընդլայնման մեթոդները---------- 5

ԳԼՈՒԽ 3. Աշակերտների ունեցած դժվարությունները պատմելու գործընթացում ----------12

Եզրակացություններ----------26

Օգտագործված գրականություն---------- 27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը:

Տարրական դասարաններում մայրենիի դասընթացի գլխավոր նպատակներից մեկը պատմելու կարողության ընդլայնումն է: Պատմելու կարողության ընդլայնումը աշակերտների աշխարհայացքի ձևավորման, մտահորիզոնի ընդլայնման, բառապաշարի հարստացման, ընդարձակման կարևորագույն միջոցներից մեկն է:

Տարրական դասարաններում մայրենիի ուսումնասիրման նպատակներից են՝ բառապաշարի հղկումն ու զարգացումը, ընդլայնումն ու հարստացումը, խոսքի ձևավորումը, բանավոր ու գրավոր կապակցված խոսք կառուցելու կարողության մշակումը: Իսկ այդ խնդիրների արդյունավետ լուծումն անհնար է՝ առանց պատմելու կարողության ձևավորման:

Հետազոտության նպատակը. Ուսումնասիրել պատմելու կարողության գործընթացը կրտսեր դպրոցում:

Հետազոտության խնդիրներն են. Ուսումնասիրել սովորողների խոսքի ընդալայնման մեթոդները, մտածողությունը, լեզվամտածողությունը, հիշողությունը, մտահաղորդակցման և լեզվահաղորդակցման ունակությունները և բացահայտել ուշադրության ձևավորումը:

ՊԱՏՄԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

Պատմելու կարողության ընդլայնումը մայրենիի դասընթացի կարևոր փուլերից է: Տարրական դասարանների մայրենիի գրքերում զետեղված են տարաբնույթ ու բազմազան ստեղծագործություններ, որոնք աշակերտները վերարտադրում կամ պատմում են, կատարում են լրացումներ, դատողություններ:

Ընթերցած նյութի բովանդակության վերարտադրումը մեծ տեղ է զբաղեցնում ընթերցանության դասերին, որովհետև պատմելն ինքնին բարդ գործընթաց է: Պատմելը համարվում է բարդ աշխատանք, որովհետև այն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով: Սովորողները, վերարտադրելով ընթերցած նյութի բովանդակությունը, սկսում են մտածել, հիշել, երևակայել, ստեղծագործել:

Պատմելու կարողության ընդլայնումը նպաստում է փոխադրություններ գրելու, ինչպես նաև շարադրություններ հյուսելու կարողությունների ձևավորմանը:

Զարգանում է աշակերտների բանավոր ու գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողությունը: Պատմելու կարողության ընդլայնումը սեր և հետաքրքրություն է առաջացնում աշակերտների մեջ, բավարարում է սովորողների ճանաչողական հետաքրքրությունները: Հոգածություն է դրսևորում լեզվի նկատմամբ, աստիճանաբար աշակերտները զգում են լեզվի գեղեցկությունը, նրբերանգներն ու ինքնատիպությունը:

Պատմելու գործընթացը մեծ նշանակություն ունի նաև աշակերտների բառամթերքի ձեռքբերման, բառապաշարի ընդարձակման և հարստացման գործում:
Ռ. Բաբայանը գրում է «Այն բառերը, որոնք սովորողների համար անծանոթ ու դժվարընկալ են, մի քանի անգամ խոսքում օգտագործելով, անմիջապես պասիվ բառապաշարից անցնում են ակտիվ բառապաշար, դառնում են նրանց սեփականությունը: Իսկ դրա շնորհիվ էլ կատարելագործվում և ամրապնդվում են աշակերտների գիտելիքները, ընդարձակվում է նրանց բառապաշարը: Աշակերտների բառապաշարը հղկվում և շտկվում է, մաքրվում է ժարգոնային բառերից » [1, էջ 72]:

Պատմելը մայրենիի դասերին մեծ դեր ունի, որովհետև պատմելու կարողության ընդլայնումը նրանց առջև բացում է բնության կախարդական աշխարհի բազմազան գույներն ու երանգները, թափանցում հոգու խորքերը, այլև կապում է նրանց հողին ու ջրին, դարձնում է ազնիվ, բարի, օգնում է ճանաչել իրենց, որոշել իրենց տեղն ու դերը ընտանիքում, դպրոցում, առաջանում է ցանկություն՝ դառնալ հասարակության լիիրավ անդամ:

Երեխաներին պետք է հարցերի միջոցով նախապատրաստել պատմելուն: Իսկ այդ հարցերը այնպես պետք է կառուցել, որ սովորողները ոչ միայն մանրամասն վերարտադրեն կարդացած ստեղծագործության բովանդակությունը, այլև կարողանան որոշել գլխավոր ու հիմնական միտքը, վերլուծեն հերոսների վարքը, կատարած գործողությունները, ճշտեն դեպքերի պատճառահետևանքային կապը:

Այս աշխատանքը երեխաների մեջ մշակում է վերլուծելու, համադրելու, հակադրելու, դատողություններ ու եզրակացություններ անելու կարողություններ, որոնք էլ կարևոր նշանակություն ունեն հետագա ուսումնական գործունեության համար:

Պատմելու կարողության ընդլայնումը շատ կարևոր տեղ է զբաղեցնում մայրենիի դասերին, որովհետև այն խթանում է նաև աշակերտների ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:

1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սովորողների խոսքի ընդլայնման մեթոդները տարրական դասարաններում ներառում են ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու սովորողների պատմելու կարողության ընդլայնման գործընթացը: Այդ մեթոդներից են՝

Դասարանական քննարկումները

Սովորողների խոսքի ընդլայնման մեթոդի ամենատարածված ձևը դասարանական քննարկումներն են: Սա նաև դասը վարելու մի եղանակ է, որտեղ յուրաքանչյուր սովորող ունի համագործակցելու և իր տեսակետը ներկայացնելու հավասար հնարավություն: Դասարանում կատարվող քննարկումը կարող է իրականացվել կամ ուսուցչի կամ սովորողի կողմից: Քննարկմանը կարող է նաև հաջորդել ներկայացումը կամ ցուցադրությունը: Դասարանական քննարկումները կարող են ընդլայնել սովորողի հասկացողությունը, ավելացնել ակադեմիական բովանդակության համատեքստ, ընդլայնել սովորողի հեռանկարները, ընդծել հակառակ տեսակետները, ամրապնդել գիտելիքները: Կախված դասընթացի թեմայից և ձևաչափից՝ իմաստալից և գրավիչ քննարկումների հնարավորությունները տարբեր են:

Ըստ Ս. Պետրինայի դասարանական քննարկումների արդյունավետությունը ապահովվում են սովորողների հետ քննարկվող հարցերը, ստացված տեղեկատվությունը այլ ձևով մեկնաբանելը, այնպիսի հարցերի օգտագործումը, որոնք զարգացնում են քննադատական մտածողությունը, օրինակ, «Կարո՞ղ ենք մեկ քայլ առաջ գնալ»,

«Ի՞նչ լուծումներ կառաջարկեք այս խնդրի համար», «Սա ի՞նչ առնչություն ունի մեր սովորածի հետ», «Որո՞նք են … տարբերությունները», «Սա որևէ առնչություն ունի՞ ձեր անձնական փորձի հետ»,« Ինչ՞ եք կարծում, ինչի՞ պատճառով է…»,«Որո՞նք են … հետևանքները»: [1, էջ 125]:

Համագործակցություն

Համագործակցությունը թույլ է տալիս սովորողներին ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացին: Համագործակցությունը սովորողների և ուսուցանվող նյութի միջև անձնական կապ է ստեղծում՝ օգնելով սովորողներին մտածել ավելի անաչառ: Խմբային աշխատանքները և քննարկումները այս դասավանդման մեթոդի օրինակներն են: Ուսուցիչները կարող են ներգրավել համագործակցությունը դասընթացի մեջ, որպեսզի գնահատեն սովորողի թիմում աշխատելու և նյութը միմյանց ներկայացնելու ունակությունները:

Հարցում

Իրավիճակից կախված հարցումը կարող է տարբեր նպատակներ ունենալ: Այն հաշվի է առնում փորձը և հեշտացնում է թեմային անդրադարձ կատարելը: Հարցման նպատակն է սովորողներին թույլ տալ եզրակացություններ կատարել իրենց փորձի վերաբերյալ ու առաջընթաց կատարել փոփոխության միջոցով ինչպես նաև, օգնել նրանց օգտագործել իրենց փորձը:

Գործողությունների հետազոտում դասասենյակում

Գործողությունների հետազոտում դասասենյակումը մի մեթոդ է, որը թույլ է տալիս ուսուցչին հասկանալ թե ինչն է դասասենյակում աշխատում ավելի լավ, որը կօգնի բարելավել սովորողի սովորելու որակը: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր դասավանդման իրավիճակ յուրահատուկ է կախված բովանդակությունից, աստիճանից, սովորողների գիտելիքներից, սովորելու ձևից և շատ ու շատ այլ գործոններից: Այս դեպքում, ուսուցիչները իրենց սովորողներին թույլ են տալիս օգտագործել հետազոտական մեթոդ որպեսզի մարտահրավեր նետեն իրենք իրենց՝ բացահայտելու նյութը ընկալելու նոր մոտեցումներ:

Սովորողներին կարելի է հանձնարարել մանրամասն, համառոտ, փոփոխելով, ստեղծագործելով, շարունակելով, մեկնաբանելով, ընտրովի, ներկայացնել որպես մասնակից :

ա) Պատմել մանրամասն կամ ընդարձակ: Մանրամասն կամ ընդարձակ պատմելը՝ պատմելու տեսակներից ամենահեշտն է, և երեխաները սիրում են կարդացած ստեղծագործության բովանդակությունը վերարտադրել մանրամասնորեն, նույնիսկ ավելացնում են այլ մտքեր:

Ա. Բահաթրյանը մեջբերում է « Որպեսզի աշակերտները կարողանան կարդացած նյութի բովանդակությունը պատմել մանրամասն կամ ընդարձակ ձևով, անհրաժեշտ է կարևորել ու կատարել հետևյալ քայլերը.

ա) արտահայտիչ կարդալ առաջարկված նյութը, որոշել տվյալ նյութի թեման, թե ինչի մասին է այն, որոշել հիմնական միտքը.

բ) որոշել բնագրի հենակետային բառերը.

գ) բնագիրը բաժանել տրամաբանական ամբողջություն կազմող մասերի, այնուհետև այդ մասերը վերնագրել, որոնք էլ կդառնան պլանի կետերը.

դ) մեկ անգամ ևս կարդալ բնագիրն ամբողջությամբ և ուշադրություն դարձնել կոնկրետ այն բառերի, արտահայտությունների վրա, որոնք դիպուկ ու ճիշտ են ներկայացնում հերոսին, նրա արարքները, բնությունը» [1, էջ 135]:

Կարդացած նյութի բովանդակության մանրամասն կամ ընդարձակ ձևով պատմելը գործադրվում է բոլոր դասարաններում, սակայն տարբեր աստիճաններում պատմելու պահանջները լինում են տարբեր: Այս ձևով պատմելը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար դժվար չէ, քանի որ նրանք սիրում են ամեն ինչ պատմել մանրամասն և վերարտադրում են նույնիսկ ոչ էական մտքերը:

Ուշադրություն պետք է դարձնել հատկապես նկարագրությունների վերարտադրմանը, որովհետև աշակերտները սովորաբար չեն կարևորում այն հատվածները, որտեղ նկարագրվում են հերոսները, նրանց արտաքինը, հագուստը, երկինքը, բնակարանը, բնությունը:

Կարդացած ստեղծագործության բովանդակությունը մանրամասն վերարտադրելիս անհրաժեշտ է կարևորել հետևյալ հիմնական պահանջները.

ա) բովանդակությունն ամբողջությա՞մբ պատմվեց. ամեն ինչ պատմվե՞ց, ի՞նչ է բաց թողնվել, ո՞ր հատվածն է բաց թողնվել.

բ) ճի՞շտ վերարտադրվեց. ամեն ինչ ճշտությա՞մբ է պատմվել, չկա՞ն անճշտություններ, ինչպե՞ս են օգտագործվել նոր բառերը, արտահայտությունները.

գ) դեպքերի հաջորդականությունը պահպանվե՞լ է. չի՞ խախտվել դեպքերի ու մտքերի հաջորդականությունը, չկա՞ն կրկնություններ, տրամաբանական խախտումներ.

բ) Համառոտ պատմել: Համառոտ պատմելու հիմնական նպատակը կարդացած բնագրի գլխավոր միտքը համառոտ ու հակիրճ ներկայացնելն է, որի միջոցով աշակերտների մեջ ձևավորվում է վերլուծելու, գլխավորը երկրորդականից տարբերելու ունակություն:

Կարդացած ստեղծագործությունը համառոտ վերարտադրելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

ա) որոշել տվյալ նյութի թեման: Վերհանել, թե ինչի մասին է բնագիրը.

բ) մտածել հիմնական մտքի շուրջ. ի՞նչ է սովորեցնում տվյալ դասանյութը.

գ) աշակերտների միջոցով առանձնացնել բնագրի հիմնական մասերը, նշել նրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը.

դ) որոշել յուրաքանչյուր մասի հենակետային բառերը, վերնագրել.

ե) կազմել բնագրի պլանը:

Համառոտ պատմելն ավելի դժվար է, քան մանրամասն կամ ընդարձակ ձևով պատմելը, որովհետև այս ձևով պատմելու ժամանակ երեխաները պետք է ավելի ստույգ տարբերեն նյութի հիմնական և երկրորդական կողմերը, ճանաչեն ու հաղորդեն էականը:

Ա. Վ. Գալստյան, Ռ. Խարազյան, Ա. Բալայան գրում են «Աշակերտների մեջ համառոտ պատմելու կարողությունը մշակելու համար, անհրաժեշտ է, որ ուսուցիչը տարբեր հարցերի միջոցով աշակերտների հետ միասին որոշի հիմնական բովանդակությունը, աշակերտներին սովորեցնի ոչ միայն գտնել գլխավոր միտքը, այլև տարբեր հնարներով կրճատել այդ » [3, էջ 136]:

Նրանք նաև մեջբերում են, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները պետք է կարողանան պատմել ընթերցած նյութի բովանդակությունը համառոտ ձևով, այսինքն, աշակերտները պետք է տան պատմության կմախքը, գործողության զարգացումը՝ առանց մանրամասնությունների ու գեղարվեստական զարդարանքների [3, էջ 138]:

Ձևափոխված պատմելու հիմնական ու գլխավոր առանձնահատկությունն այն է, որ տվյալ դեպքում սովորողները չեն կարող իրենց կարդացածի մեջ եղած բառերը, բառակապակցությունները, արտահայտություններն ու նախադասությունները նույնությամբ օգտագործել, այլ պետք է դրանք ենթարկեն փոփոխության: Այսինքն՝ սովորողը կարող է փոխել բնագրում եղած որոշ բառեր. կարող է բառերը փոխարինել համապատասխան հոմանիշներով, տվյալ նախադասության, մտքի ընկալմանը համապատասխանող բառերով: Իսկ այդ աշխատանքն էլ շատ կարևոր է, որովհետև զարգացնում է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների խոսքը, լեզուն, բարձրացնում է խոսքի կուլտուրան:

Ձևափոխված պատմելիս սովորողները գիտակցում և հասկանում են կարդացած ստեղծագործության կամ բնագրի լեզվական նյութը: Գիտակցաբար օգտագործում են իրենց ըմբռնած լեզվական նյութը հատկապես այն ժամանակ, երբ նրանք տվյալ բնագրի վրա որոշակի ինքնուրույն աշխատանքներ են տանում:

Ձևափոխված պատմելն իրականանում է մի քանի եղանակով՝ փոխելով դեմքը, ժամանակը, պլանը կամ կառուցվածքը:

Դատողություններով կամ մեկնաբանելով պատմել: Դատողություններով կամ մեկնաբանելով պատմելը շատ կարևոր է և մեծ նշանակություն ունի, որովհետև այն նպաստում է նրան, որ սովորողները կարողանան բացատրել և հիմնավորել դեպքերն ու երևույթները:

Դատողություններով կամ մեկնաբանելով պատմելու համար անհրաժեշտ է, որ երեխաները լավ իմանան նյութի բովանդակությունը և կարողանան ինքնուրույն դատողություններ ու եզրակացություններ անել: Դատողություններով կամ մեկնաբանելով պատմելը զարգացնում է սովորողների տրամաբանությունը, մտածողությունը: Մտածողությունը շրջապատող միջավայրի առարկաների և երևույթների հարաբերությունների և կապերի իմացությունն է:

Ըստ Ժան Պիաժեի կոգնիտիվ զարգացման տեսության ժամանակակից կրթական մոտեցումների համատեքստում՝ **մտածողությունն** իմացական գործընթաց է, որի միջամտությամբ մարդը կարողանում է դուրս գալ անմիջական զգայական արտացոլման միջոցով ստացված տվյալների սահմաններից, բացահայել երևույթներիների էական, օրինաչափ կապերն ու հատկանիշները: :Մարդը սկսում մտածել այն ժամանակ, երբ նրան անհրաժեշտ է որևէ հարց լուծել, որևէ խնդիր իրականացնել: Այսինքն մարդը անընդհատ չի մտածում: Մարդ լարում է ուղեղը, մտածում , երբ կա պրոբլեմային իրավիճակ:

Գոյություն ունի մտածողության երեք տեսակ՝ **ակնառու գործնական՝** կիրառվում է մինչև երեք տարեկան երեխաների կողմից, օրինակ՝ երեխան կոտրում է խաղալիքը պարզելու համար թե ինչ կա դրա մեջ **ակնառու պատկերավոր՝** կիրառվում է երեքից բարձր մինչև յոթ տարեկան երեխաների կողմից, օրինակ՝ նրանք մտածում են պատկերացնում են, բայց չեն կարողանում դա կիրառել:
խոսքային տրամաբանական կամ վերացական՝ Այն մտածողությունն է, երբ մարդը ինչ որ մտածում է, կարողանում է իր մտածածի, պատկերացրածի, եթե ոչ ամբողջությամբ արտաբերել, իրականացնել խոսքի և լեզվի միջոցով:

Մտածողության զարգացման հիմնական տեսակները կրտսեր դպրոցական տարիքում անցումն է ակնառու-պատկերավոր մտածողությունից խոսքային տրամաբանական կամ վերացական մտածողության, որը Ժ.Պիաժեն անվանում է ռեպրեզենտատիվ ինտելեկտ:

Այս մտածողության տեսակի զարգացման շնորհիվ սովորողները սովորում են ընթերցածի բովանդակությունը վերարտադրել փոփոխություններով, կարողանում են կատարել դատողություններ ու եզրակացություններ, վերլուծում են հերոսների վարքը, կատարած լավ ու վատ արարքները, նրանց մասին կարծիք են հայտնում, հիմնավորում են նրանց գործողություններ: Պատմելու այս ձևը կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին աշխուժացնում է, մեծ բավականություն է պատճառում: Այս դեպքում սովորողներն սկսում են մտածել, երևակայել, դատողություններ անել, ստեղծագործել, եզրակացնել: Այս ձևով պատմելիս սովորողներն ավելի հստակորեն պատկերացնում են սեփական ստեղծագործական կարողությունների մակարդակը և աշխատում են դրանց զարգացման ուղղությամբ: Սովորում են վերլուծել ինչպես հերոսների, այնպես էլ սեփական արարքները, զարգացնում և բարելավում են իրենց և ուրիշների հարաբերությունները՝ օգտագործելով բարեկիրթ խոսքի հնարներ: Այս ձևով պատմելը զարգացնում է սովորողների խոսքը, հարստացնում բառապաշարը:

Շարունակելով պատմել:

Շարունակելով պատմելը ստեղծագործական աշխատանք է և մեծ նշանակություն ունի սովորողների խոսքի, մտածողության զարգացման, ինչպես նաև ստեղծագործական կարողությունների զարգացման ու ամրապնդման համար:

Այս ձևով պատմելիս սովորողները դրսևորում են աներևակայելի ստեղծագործական կարողություններ, հորինում ու կառուցում են անսպասելի ու յուրահատուկ պատմություններ: Շարունակելով պատմելը համարվում է ստեղծագործաբար պատմելու տարատեսակ:

Ընտրովի պատմել: Պատմելու տեսակներից է նաև ընտրովի կամ ընտրելով պատմելը: Պատմելու այս ձևը հիմնականում գործադրվում է երկրորդ դասարանից սկսած: Այս դեպքում երեխաները կարդացած նյութի ողջ բովանդակությունը ոչ թե վերարտադրում են, այլ պատմում են կոնկրետ այն հատվածը կամ հատվածները, որոնք անհրաժեշտ է վառ ու լավ կերպով տպավորել սովորողների հիշողության մեջ:

Ընտրովի պատմելու համար դասարանում լավ կարդացող սովորողն ընթերցում է դասը, որից հետո, կոլեկտիվ կերպով որոշում են կարդացած ստեղծագործության հիմնական ու կարևոր մտքերը:

Այս աշխատանքը շատ կարևոր է, որովհետև երեխաները գիտակցում, հասկանում և յուրացնում են ընթերցած ստեղծագործության բովանդակությունը, լեզվական և ժանրային առանձնահատկությունները, որոշում են հեղինակի մտահղացումը, նկարագրված դեպքերի տրամաբանությունը, հենակետային բառերը: Որպեսզի սովորողները կարողանան կարդացած ստեղծագործությունն ընտրովի վերարտադրել, անհրաժեշտ է կարևորել հետևյալ քայլերը.

ա) արտահայտիչ կարդալ բնագիրը և հասկանալ նրա բովանդակությունը,

բ) մեկ անգամ ևս կարդալ բնագիրը և որոշել նրա թեման, որից հետո, բնագիրը բաժանել տրամաբանական հատվածների,

գ) որոշել այն հատվածները, որոնք վերաբերում են պատմելու համար հանձնարարված թեմային, հերոսին,

դ) այդ հատվածները խմբավորել և վերնագրել,

ե) որոշել այդ ամբողջացված հատվածների ոճը,

զ) ձևակերպել հիմնական միտքը և որոշել ընտրված հատվածի տրամաբանական կառուցվածքը,

է) պատմել ողջ նյութի հատուկ հանձնարարությամբ ընտրված հատվածը:

Ընտրովի պատմելը նպաստում է, որ թվով շատ սովորողներ պատմեն միևնույն նյութը, երեխաներին մեծ բավարարվածություն է պատճառում, օգնում է, որ այդ գործընթացն իրականանա առանց ձանձրույթի, աշակերտների մեջ առաջանում է սեր, հետաքրքրություն և հոգածություն ուսման նկատմամբ:

ը) Պատմել որպես մասնակից և որպես ականատես: Պատմել որպես մասնակից նշանակում է՝ պատմել առաջին դեմքով: Որպես ականատես պատմելիս աշակերտները

կարդացած նյութի բովանդակությունը վերարտադրում են այնպես, որ կարծես իրենք ոչ թե մասնակցում են տեղի ունեցող դեպքերին, այլ հեռվից կարծես դիտելիս են եղել այդ դեպքերը: Այս ձևով պատմելը կրտսեր դպրոցականների մեջ ձևավորում է տեսածի, լսածի, զգացածի մասին ականատեսի դիրքից պատմելու ունակություն:

Որպես մասնակից պատմելիս աշակերտները կարդացած նյութի բովանդակությունը պետք է վերարտադրեն այնպես, որ կարծես իրենք էլ այդ ստեղծագործության հերոսներից են և մասնակցել են տեղի ունեցող դեպքերին: Այս ձևով պատմելիս կրտսեր դպրոցականներն իրենց կարծիքն ու վերաբերմունքն են արտահայտում հերոսների և դեպքերի վերաբերյալ:

3. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Պատմելու կարողության ընդլայնման գործընթացը կարևոր է նրանով, որ այն հանդիսանում է երեխաների կարդացած ստեղծագործության յուրացման և հասկացման միջոց: Մեր հիմնական նպատակն է կարդացած ստեղծագործությունը աշակերտներին հասկանալի դարձնելը, մտածել և դատել սովորեցնելը, ինքնուրույն և համագործակցային աշխատանքը խթանելը, ինչպես նաև ընթերցանության և առհասարակ գրքի հանդեպ սեր արթնացնելը:

Ընթերցածի բովանդակության վերարտադրման ժամանակ աշակերտները հիմնականում թույլ են տալիս խոսքային սխալներ, որոնք էլ խոչընդոտ են հանդիսանում պատմելու ուսուցման գործընթացում, և տվյալ նյութի բովանդակության վերարտադրումը դառնում է բարդ ու դժվար: Ստեղծագործության վերարտադրումը դառնում է դժվար, եթե աշակերտը չի հասկացել տվյալ նյութի մեջ եղած բառերը: Պատմելու ուսուցման գործընթացում շակերտները դժվարանում են կարդացածի բովանդակությունը վերարտադրել համառոտ ձևով: Այս դեպքում աշակերտները չեն ըմբռնում բնագրի գլխավոր միտքը, նրանց մեջ ձևավորված չէ վերլուծելու, գլխավորը երկրորդականից տարբերելու ունակությունը:

Պատմելու կարողության ընդլայնման գործընթացում աշակերտների ունեցած դժվարությունների հիմնական պատճառներից է նաև սահմանափակ բառապաշարը, խոսքի մեջ օգտագործվող բառերի սահմանափակ քանակը: Մեր նպատակն է ակտիվացնել յուրացրած բառերը, հասնել նրան, որ սովորողներն իրենց խոսքում դրանք օգտագործեն ճիշտ և տեղին:

Կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացումն ուակտիվացումը կարևոր է նրանով, որ ընթերցածի բովանդակության վերարտադրման ժամանակ, երբ երեխան չի հիշում տվյալ նյութի մեջ եղած որոշ բառեր, նա կարող է այդ բառը փոխարինել նույն իմաստն արտահայտող այլ բառով: Պատմելիս աշակերտները հարազատ չեն մնում պատումի լեզվին, ոճին: Այսինքն, նրանք դժվարանում են պատմել հենց այն լեզվով, որով շարադրված է նյութը, դժվարանում են օգտագործել հերոսների խոսքերը, արտահայտությունները, բուն բառը: Տարրական դասարաններում աշակերտները դժվարանում են վերարտադրել կարդացած նյութի բովանդակությունը երրորդ դեմքով՝ որպե ականատես: Երեխաները նյութի բովանդակությունը վերարտադրում են առաջին դեմքով՝ որպես մասնակից: Մենք միշտ ուղղում ենք աշակերտներին՝ առաջարկելով, որ նրանք պատմեն երրորդ դեմքով:

Սկզբնական շրջանում, երբ աշակերտները դեռևս գաղափար չեն կազմում բայի երրորդ դեմքի մասին, չեն հասկանում առաջադրանքի բուն էությունը և դժվարանում են: Իսկ հետագայում, երբ աշակերտները գաղափար են ունենում բայի երրորդ դեմքի մասին, այդ դեպքում երեխաները, հասկանալով նյութի բովանդակությունը, պատմում են երրորդ դեմքով:Տարրական դասարաններում սովորողների մեջ քիչ են այնպիսիք, որոնք առանց որևէ ջանքերի ըմբռնում են կարդացած նյութերը, բայց բնագրի շուրջ տարվող աշխատանքը կնպաստի աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այդ նպատակով կարելի է օգտագործել բազմաթիվ խաղեր ու հնարներ: Օրինակ 2-րդ դասարանի մայրենիի դասագրքից <<Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ>> ստեղծագործության ամփոփման ժամանակ օգտագործել ենք խմբավորման մեթոդը. [4, էջ 159]:



Երեխաներին նաև հանաձնարարել ենք հետևյալ առաջադրանքները.

Հորինի՛ր մի պատմություն ըստ տրված նկարի:



Այս առաջադրանքների օգնությամբ երեխաները կատարում են դատողություններ, եզրակացություններ:

Ստորև բերենք մեկ օրինակ

Դաս 1

Առարկան՝ Մայրենի 2-րդ

Դասի թեման՝ << Լավաշը>>

Դասի նպատակը՝

Մեծադիր նկարների միջոցով աշակերտներին ցույց տալ ազգային հացի, հացաթխման պարագաները՝թոնիր, լավաշ, ալյուր, ցորեն

Դասի խնդիրները՝

- Հետաքրքիր իրադրություն քննարկելով՝ բացատրել, որ հացը չի կարելի դեն նետել, հացը սուրբ է
- «Խաթարված հերթականություն» մեթոդի միջոցով ցուցադրել հացի ստեղծման ընթացքը՝մինչև 5 գործողությամբ

Դասի կահավորումը՝

- նկարներ (բնագրի, թոնրի, ցորենի արտի, հասկի, հացի ստեղծման ընթացքը ներկայացնող),
- պաստառներ (ասույթներ հացի մասին),
- քարտեր խմբային աշխատանքի համար,
- հացատեսակներ՝ մատնաքաշ, լավաշ, բոքոն:
- Դասի ընթացքը.

Խթանման փուլ

ա) Գրավիչ մուտք ապահովելու ակնկալիքով իրականացվում է ուսումնասիրվելիք նյութի գուշակություն՝ Բանալի բառը հնարի միջոցով: Ուսուցիչն ու աշակերտները հյուրերին դիմավորում են աղուհացով:

Ուսուցիչ: Սիրե՛լի երեխաներ, այսօր առավոտյան ես նամակ ստացա: Այն ուղղված է ձեզ՝ II դասարանցիներիդ: Նամակագիրը Մովսես պապիկն է: Դուք նրան չեք ճանաչում: Ես կկարդամ նամակը, իսկ դուք կխորհեք նամակի բովանդակության շուրջ:

Գուշակու՞մ եք, թե ինչի մասին է խոսվում նամակում: Ուզու՞մ եք դա իմանալ: Այդ բառը

թաքնված է այս նկարների տակ (հասկ, արտ, ցորեն): Գտնենք այն:

h ա g

Յուրաքանչյուր նկարի տակ գրելով այն տառը, որով սկսվում է համապատասխան բառը, աշակերտները գտնում են բանալի բառը՝ հացը, և գրում շրջանակի մեջ:

Ուսուցիչ: Եվ որպեսզի Մովսես պապիկի նամակին ճիշտ պատասխան տանք, տեսնենք, թե ինչ գիտենք հացի մասին:

բ) Մտագրոհի միջոցով վեր են հանվում աշակերտների նախնական գիտելիքները տվյալ նյութի վերաբերյալ: Անհրաժեշտ բառերը գրառվում են գրատախտակին:
Հոծ տառերով գրվածները նոր նյութից ստացված տեղեկություններն են.

Հաց – հող, արև, ցորեն, լավաշ, խմոր, դժվարություն, հասկ, սուրբ ալյուր, չարչարանք, արտ, մատնաքաշ:

(լավաշը 1 տարի պահում է թարմությունը, ազգային հաց է, օգտագործում են չոր և փափուկ վիճակում, պատրաստման համար անհրաժեշտ է գրտնակ, հացթուխ, խմորի գունդ, թոնիր և այլն):

գ) Խաթարված հերթականություն մեթոդի միջոցով ներկայացվում է հացի ստեղծման ընթացքը՝ նկարներով:

Ուսուցիչ: Այս նկարներում մարդիկ հաց են ստեղծում: Սակայն աշխատանքի հերթականությունը խաթարված է: Վերադասավորե՛ք նկարները և ներկայացրեք ճիշտ հաջորդականությամբ:

Դասի ընթացքում բացատրվում է կալսել բառը: Սովորողները ծանոթանում են հնագույն աշխատանքային գործիքին՝ երկանքին: Այնուհետև ասվում է, որ այս նկարներում մարդիկ հաց են ստեղծում ձեռքի աշխատանքով: Այժմ գիտությունը զարգացել է, և մարդուն օգնության են եկել մեքենաներն ու խելացի սարքերը:

Հարկավոր է նկարներով ցույց տալ, թե ինչպես են մեքենաների և սարքերի միջոցով հաց ստանում:

Ուսուցիչ: Դուք բավականին շատ բան գիտեք հացի և դրա ստեղծման մասին: Կարծում եմ՝ արդեն պատրաստ եք պատասխանելու Մովսես պապիկի նամակին: Լսե՛ք նրան:

Նամակի բովանդակությունը

Երեկ երեկոյան ես մեր բակում հանդիպեցի տղաների, որոնցից մեկը հաց էր ուտում: Ավելացած հացի կտորը նա գցեց գետնին, իսկ մյուսը ոտքի հարվածով դեն նետեց այն:

Ես իմ հոգու խորքում ցավ զգացի և որոշեցի նամակ գրել ձեզ: Գուցե նրանք ձեր շրջապատու՞մ են. խորհու՛րդ տվեք նրանց: Կարծում եմ՝ տղաները կընդունեն ձեր խորհուրդները:

Մտածի՛ր, զույգ կազմիր, մտքեր փոխանակիր մեթոդի միջոցով աշակերտները պատասխանում են պապիկի նամակին՝ խորհուրդներ տալով հացի արժեքը չիմացող տղաներին:

Աշակերտների պատասխաններ.

- Մենք գտնում ենք, որ տղաները ճիշտ չվարվեցին: Նրանց խորհուրդ կտանք, որ հացը չգցեն գետնին: Եթե փողոցում հաց ես գտել, ավելի լավ է՝ դրանով սոված թռչուններին կերակրիր:

- Տղանե՛ր, պետք է հարգանքով վերաբերվել հացին:

- Մենք կարծում ենք, որ տղաները ճիշտ չվարվեցին, որովհետև հաց ստեղծելը քրտնաջան աշխատանք է պահանջում: Հացը մարդու հիմնական սնունդն է: Խորհուրդ կտանք այդ տղաներին չփչացնել մեծ դժվարությամբ ձեռք բերված հացը:

- Մենք կարծում ենք, որ տղաները ճիշտ չվարվեցին, որովհետև հացը մեզ համար շատ կարևոր սննդամթերք է: Պետք է հոգատար լինել և խնայել հացը:

- Տղաներ, գնահատե՛ք ուրիշների աշխատանքը:

- - Տղանե՛ր, պետք է սիրել, հարգել հացը, որովհետև այն ծնվում է չարչարանքով, դժվար աշխատանքի շնորհիվ:

Ուսուցիչ: Ապրե՛ք, երեխաներ: Շատ ճիշտ դիրքորոշում ունեք հացի հանդեպ: Այո՛, պետք հարգել հացը: Ցանկացած անփույթ վերաբերմունք վիրավորում է հացի ծագումն ու արժեքը: Պետք է միշտ հիշել ու հարգել այն մարդկանց, որոնք չարչարանքով հաց են ստեղծում և Աստծուց շնորհակալ լինել, որպեսզի մեզ չզրկի հանապազօրյա հացից:

Հացը ոչ միայն կյանքի աղբյուր է, այլև բարեկամության և խաղաղության խորհրդանիշ: Մենք այսօր մեր հյուրերին դիմավորեցինք աղուհացով: Դա նշան է հարգանքի, խաղաղության և բարեկամության:

Ֆիզկուլտ-դադար

Ուսուցիչ: Դուք երևի կռահեցիք, թե ինչի մասին է ընթերցվելիք նյութը: Հետևում է պատասխանը՝ հացի:

Ուսուցիչ: Այո՛, հացի: Այսօր հացի տեսակներից ընտրված է լավաշը: Ինչ ասվեց հացի մասին, վերաբերում է նաև լավաշին:

Անդրադարձ կատարենք մտագրոհով գրատախտակին դուրս բերված գրառումներին. ի՞նչ գիտեք լավաշի մասին, գրե՛ք լավաշի դիմաց:

Իմաստի ընկալման փուլ

Նոր նյութի հաղորդումը հնարավոր է իրականացնել

Ուղղորդված ընթերցանություն՝ կանգառներով մեթոդով:

Սովորողներին պետք է զգուշացնել, որ «Լավաշը պատմվածքի ընթերցանությունը կատարվելու է կանգառներով՝ հատված առ հատված: Նախատեսված հատվածից այն կողմ չի կարելի ընթերցել:

I հատված

Առաջին հատվածը ընթերցելուց հետո աշակերտները պատասխանում են հետևյալ հարցերին:

1. Հայերիս հայրենիքը Հայաստանն է, իսկ հնդիկների՞նը:
2. Հնդիկ իշխանը Հայաստանի ո՞ր մայրաքաղաքում էր գտնվում:
3. Այժմ ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը: Ինչպե՞ս էր կոչվում այն նախկինում:
4. Ի՞նչ էր անում հնդիկ իշխանը Հայաստանում:
5. Ովքե՞ր են արհեստավորները:

Կարելի է նշել, որ այդ ժամանակաշրջանում արհեստագործությունը զարգացած էր Հայաստանում, և հնդիկ իշխանին այդ բանը շատ էր հետաքրքրում:

6. Ամենից շատ ի՞նչը դուր եկավ հնդիկ իշխանին:
7. Ինչպիսի՞ն էր լավաշը:

Այս փուլում նպատակահարմար է բացատրել «ճանապարհ կտրել է դարձվածքը, ինչպես նաև անդրադարձ կատարել մտագրոհի ընթացքում կատարված գրառումներին, նոր ստացված տեղեկությանը՝ բարակ հաց, և կարմիր կավիճով գրանցել լավաշին վերաբերող գրառումների շարքում:

Մինչև երկրորդ հատվածի ընթերցանությունը հարկավոր է աշակերտներին առաջարկել պատասխանել հետևյալ հարցերին.

1. Եթե լավաշը հնդիկ իշխանին շատ դուր եկավ, ապա ի՞նչ եք կարծում, ի՞նչ է կատարվելու երկրորդ հատվածում: Հնդիկ իշխանը ի՞նչ քայլերի է դիմելու:

Սովորող: Ես կարծում եմ, որ հնդիկ իշխանը կգտնի հացթուխին և իր շնորհակալությունը կհայտնի նրան՝ այդքան համեղ հաց թխելու համար:

Սովորող: Ինձ թվում է՝ նա լավաշ կգնի և իր հետ կտանի Հնդկաստան:

Սովորող: Ես կարծում եմ՝ նա հացթուխից կիմանա, թե ինչպես է պատրաստվում լավաշը, որպեսզի իրենց հայրենիքում էլ թխեն:

II հատվածի ընթերցումից հետո սովորողներին ուղղել հետևյալ հարցերը.

1. Կատարվե՞ց այն, ինչ կանխագուշակել էիք:
2. Իրականում ի՞նչը հետաքրքրեց հնդիկ իշխանին, ի՞նչ իմացավ նա լավաշի մասին:

Անդրադարձ մտագրոհի գրառումներին. ավելացնել ևս նոր տեղեկություն լավաշի մասին՝ թարմությունը պահում է մինչև մեկ տարի (այդ գրառումը կարմիր կավիճով կատարել լավաշի մոտ):

Հարց.

- Մեկ տարին քանի՞ ամիս է:

Մինչև III հատվածի ընթերցումն առաջադրվող հարց.

- Ի՞նչ եք կարծում՝ լավաշը կդիմանա՞:

Սովորող: Ես կարծում եմ, որ կդիմանա, որովհետև հացթուխները սուտ չեն խոսում:

Սովորող: Կդիմանա, բայց կչորանա:

/ հատվածի ընթերցանություն և հարցերի պատասխաններ.

-Այն, ինչ կանխագուշակել էիք, կատարվե՞ց:

-Ի՞նչ եք կարծում, ինչի՞ շնորհիվ դիմացավ լավաշը:

-Երբ չորանում է լավաշը, փչանու՞մ է:

Այստեղ կարելի է տալ բացատրություններ, թե ինչ պետք է անել, որպեսզի չոր լավաշն իր նախկին թարմությունն ու փափկությունը վերականգնի:

Ուսուցիչ: Աշխարհում շատ քիչ ժողովուրդներ կան, որ լավաշ են թխում: Առաջին անգամ լավաշ թխել են հայերը: Մեր հարևանները լավաշ թխել սովորել են մեզնից: Նախկինում լավաշը թխում էին թոնրի մեջ:

Մեծադիր նկարով ցույց է տրվում թոնիրը: Սովորողները ծանոթանում են ազգագրական հացաթխման պարագաներին: Ասվում է, որ այժմ լավաշը թխում են նաև էլեկտրական վառարաններում:

Ֆիզկուլտ-դադար

Կատարվում է երգ՝ «Թոնիրում է»: Երգելով և շարժումներով ցույց է տրվում լավաշ թխելու ընթացքը և հացի տարբեր տեսակներ:



Խմբային աշխատանք

1- ին Խումբ- Բնագրից դուրս գրել 5 բարդ բառ և որոշել արմատները:

2- րդ Խումբ- Բնագրից դուրս գրել 5 ածանցավոր բառ, ընդգծել ածանցները:

3- րդ Խումբ- Որոշել նախադասությունը ըստ կազմության և գտնել գլխավոր անդամները.

Կարմիր վարդը բուրում է պարտեզում:

4- րդ Խումբ- Նկարել լավաշ, գրել հնգյակ լավաշի մասին.

Լավա՛շ, Բարակ, համեղ,
Բուրում ես շարունակ,
Ես շատ եմ սիրում լավաշ, Թա՛րմ
լավաշ:

5- րդ Խումբ- Նկարել լավաշ, գրել հանելուկ լավաշի մասին.

Ի՞նչն է, ի՞նչը. Բարակ է և համեղ,
Ապրում է շատ երկար, Հաց է
հայկական:

Կշռադատման փուլ

1. «Քառաբաժան մեթոդի օգնությամբ ամփոփել և ամրակայել նոր նյութը:

Ի՞նչ իմացա	Ի՞նչ տեսա
Ի՞նչ զգացի	Ի՞նչ եզրակացրի

1-ին խումբ- Ի՞նչ իմացա 2-րդ խումբ- Ի՞նչ զգացի 3-րդ խումբ- Ի՞նչ տեսա

4-րդ խումբ- Ի՞նչ եզրակացրի

Ներկայացնում է խմբի յուրաքանչյուր անդամ :

6րդ խումբ- 1. Հորինել պատմվածքի շարունակությունը:

2. Հացի մասին ասույթների մեկնաբանում:

3. Ներկայացնել երկխոսություն պատմվածքի հերոսների՝ հնդիկ իշխանի և հացթուխի միջև:

Հնդիկ իշխան: Բա՛րև, հացթո՛ւխ եղբայր:

Հացթուխ: Բարև՛, բարեկամս:

Հնդիկ իշխան: Հացթու՛խ եղբայր, եկել եմ իմ շնորհակալությունը հայտնելու այդքան համեղ հաց թխելու համար:

Հացթուխ: Անու՛շ լինի, բարեկա՛մս, համեցե՛ք, էլի գնեք:

Այս թեման սովորողների մեջ դաստիարակում է հացի հանդեպ պատշաճ վերաբերմունք, կատարելագործում է երեխաների հորինելու կարողությունները, ինչպես նաև նպաստում է նյութի բովանդակությունը պատմելու տարբեր տեսակներով վերարտադրելու կարողության զարգացմանը:

Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման և պատմելու կարողության ձևավորման գործում կարևոր և մեծ նշանակություն ունի պատմելու խաղը: Պատմելու խաղը շատ կարևոր է, որովհետև այն հնարավորություն է տալիս, որ սովորողը պատմի կարդացածը, լսածը, տեսածը, զգացածն ու ապրածը և նկարի: Այս հնարի շնորհիվ երեխան բանավոր պատմածը, լսածը կամ հասկացածը նկարում է և այդ նկարներին անուններ տալիս մեկ բառով, բառակապակցությամբ, նախադասությամբ: Այդ անունները նա գրում է նկարների անկյունում և ցուցադրում: Պատմելու խաղի կիրառման ժամանակ կարող ենք հանձնարարել, որ երեխաները նոր պատմություն հորինեն, այնուհետև կանգնեն բարձրության վրա կամ հատակին և շուրջը նստածներին պատմեն իրենց հորինածը: Որից հետո դասընկերներին ցույց տան իրենց նկարածը:

Պատմելու այս խաղը մեծ նշանակություն ունի: Այս խաղի ժամանակ երեխաները ձեռք են բերում գիտելիքներ, հարստանում և ընդարձակվում է նրանց բառապաշարը, աստիճանաբար սովորում են խոսքում օգտագործել բարեկիրթ խոսքի ձևեր, ձեռք են բերում ազնիվ վարքագիծ: Պատմելու խաղի ժամանակ սովորողները հաղորդակցվում են միմյանց հետ, նայելով միմյանց, նկատելով միմյանց ժեստերը, դիմախաղերը, դրանով էլ ավելի են ներքաշվում խաղի մեջ:

Խաղի ժամանակ իրար են պատմում իրենց լսածը, հորինածը, խոսում են իրենց զգացմունքների, հույզերի, ապրումների ու երևակայական մտքերի մասին: Դրանք էլ, իրենց հերթին, հիմք են հանդիսանում կրտսեր դպրոցականների բանավոր ու կապակցված խոսքի զարգացման համար: Սովորողների մեջ ձևավորվում է մայրենի լեզվով բանավոր ու գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողություն:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները հաղորդակցման բուռն ցանկություն են ունենում, իսկ պատմելու խաղը բավարարում է նրանց հաղորդակցման պահանջմունքները: Այս հնարն ապահովում է սովորողներին ձեռք բերած լեզվական գիտելիքները խոսքային գործունեության մեջ հասկանալով և ճիշտ կիրառելու կարողություն:

Պատմելու խաղը դասը դարձնում է հետաքրքիր և ուշագրավ: Ստեղծում է այնպիսի աշխատանքային մթնոլորտ, որտեղ երեխաները համարձակ, ազատ ու անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը, բանավոր վերարտադրում են կարդացածն ու հասկացածը:

6 րդ խումբ- 1. Հորինել պատմվածքի շարունակությունը:

2. Հացի մասին ասույթների մեկնաբանում:
3. Ներկայացնել երկխոսություն պատմվածքի հերոսների՝ հնդիկ իշխանի և հացթուխի միջև:

Հնդիկ իշխան: Բա՛րև, հացթո՛ւխ եղբայր:

Հացթուխ: Բարև՛, բարեկամս:

Հնդիկ իշխան: Հացթու՛խ եղբայր, եկել եմ իմ շնորհակալությունը հայտնելու այդքան համեղ հաց թխելու համար:

Հացթուխ: Անու՛շ լինի, բարեկա՛մս, համեցե՛ք, էլի գնեք:

Այս թեման սովորողների մեջ դաստիարակում է հացի հանդեպ պատշաճ վերաբերմունք, կատարելագործում է երեխաների հորինելու կարողությունները, ինչպես նաև նպաստում է նյութի բովանդակությունը պատմելու տարբեր տեսակներով վերարտադրելու կարողության զարգացմանը:

Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման և պատմելու կարողության ձևավորման գործում կարևոր և մեծ նշանակություն ունի պատմելու խաղը: Պատմելու խաղը շատ կարևոր է, որովհետև այն հնարավորություն է տալիս, որ սովորողը պատմի կարդացածը, լսածը, տեսածը, զգացածն ու ապրածը և նկարի: Այս հնարի շնորհիվ երեխան բանավոր պատմածը, լսածը կամ հասկացածը

նկարում է և այդ նկարներին անուններ տալիս մեկ բառով, բառակապակցությամբ, նախադասությամբ: Այդ անունները նա գրում է նկարների անկյունում և ցուցադրում: Պատմելու խաղի կիրառման ժամանակ կարող ենք հանձնարարել , որ երեխաները նոր պատմություն հորինեն, այնուհետև կանգնեն բարձրության վրա կամ հատակին և շուրջը նստածներին պատմեն իրենց հորինածը: Որից հետո դասընկերներին ցույց տան իրենց նկարածը:

Պատմելու այս խաղը մեծ նշանակություն ունի: Այս խաղի ժամանակ երեխաները ձեռք են բերում գիտելիքներ, հարստանում և ընդարձակվում է նրանց բառապաշարը, աստիճանաբար սովորում են խոսքում օգտագործել բարեկիրթ խոսքի ձևեր, ձեռք են բերում ազնիվ վարքագիծ: Պատմելու խաղի ժամանակ սովորողները հաղորդակցվում են միմյանց հետ, նայելով միմյանց, նկատելով միմյանց ժեստերը, դիմախաղերը, դրանով էլ ավելի են ներքաշվում խաղի մեջ:

Խաղի ժամանակ իրար են պատմում իրենց լսածը, հորինածը, խոսում են իրենց զգացմունքների, հույզերի, ապրումների ու երևակայական մտքերի մասին: Դրանք էլ, իրենց հերթին, հիմք են հանդիսանում կրտսեր դպրոցականների բանավոր ու կապակցված խոսքի զարգացման համար: Սովորողների մեջ ձևավորվում է մայրենի լեզվով բանավոր ու գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողություն:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները հաղորդակցման բուռն ցանկություն են ունենում, իսկ պատմելու խաղը բավարարում է նրանց հաղորդակցման պահանջմունքները: Այս հնարն ապահովում է սովորողներին ձեռք բերած լեզվական գիտելիքները խոսքային գործունեության մեջ հասկանալով և ճիշտ կիրառելու կարողություն:

Պատմելու խաղը դասը դարձնում է հետաքրքիր և ուշագրավ: Ստեղծում է այնպիսի աշխատանքային մթնոլորտ, որտեղ երեխաները համարձակ, ազատ ու անկաշկանդ արտահայտում են իրենց մտքերը, բանավոր վերարտադրում են կարդացածն ու հասկացածը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պատմելու կարողության ընդլայնումը նպաստում է կրտսեր դպրոցականների՝ բանավոր ու գրավոր գրագետ խոսք կառուցելու ձևավորմանը, բառամթերքի ձեռք բերմանը, բառապաշարի ընդարձակմանն ու հարստացմանը, պատկերավոր և քննադատական մտածողության արտահայտմանը, ստեղծագործական և մտավոր գործունեություն ծավալելու, ինչպես նաև ուշադիր և ինքնուրույն աշխատելու ձևավորմանը:

Սովորողները պատմում են այնպես, ինչպես իրենք են ընկալել կարդացած նյութը: Երբ նրանք վերարտադրում են այդ նյութի բովանդակությունը, նրանց երևակայության մեջ ստեղծվում են վառ ու կենդանի մտապատկերներ, որոնք ասոցացվում են իրենց համար ծանոթ երևույթի կամ հերոսի հետ, որն էլ նպաստում է տվյալ նյութի ավելի արդյունավետ ընկալմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաբայան Ռ., Գրավոր խոսքի զարգացմանը նպաստող աշխատանքներ, «Նախաշավիղ», 2004, N 3-4 72 էջ:
2. Պետրինա Ս., Դասավանդման առաջադեմ մեթոդները տեխնոլոգիական դասասենյակի համար, (2007) Ինֆորմացիոն գիտական հրատարակչություն, 125 էջ:
3. Բահաթրյան Ա., Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ, Թիֆլիս, 1878, թ 135 էջ:
4. Գալստյան Ա. Վ., Խարազյան Ռ., Բալայան Ա., Հայոց լեզվի հարցարանների ժողովածու, Եր., Էդիթ Պրինտ, 2009 136 էջ:
5. Գալստյան Ա. Վ. և ուրիշներ, Ինքնուրույն ընթերցանության նյութեր (3-րդ դասարան), Եր., Էդիթ Պրինտ, 2010 138 էջ:
6. Վաչագան Սարգսյան, Կարինե Թորոսյան, Սուսաննա Գրիգորյան, Հեղինե Խաչատրյան Մակմիլան-Արմենիա, 2008 - 159 էջ: